4.qxd 04/03/2025 14:58 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇՐՋԱՆ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 28 փետրվարի 2025թ. թիվ 4 (608)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Փետրվարի 17-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց «ԵՄ-ն Հայաստանի համայնքներում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի» եւ «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման» ծրագրերի թիմի ղեկավար Ալլա Բերբերյանին, «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման» ծրագրի Գեղարքունիքի մարզային համակարգող Սոնա Գրիգորյանին եւ «Սեւանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի Գեղարքունիքի մարզի ծրագրերի համակարգող Վարազդատ Սարգսյանին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին Գեղարքունիքի մարզում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի ուղղությամբ իրականացված եւ իրականացվող ծրագրերի ընթացքն ու հետագա անելիքները:

Ալլա Բերբերյանի ներկայացմամբ՝ «ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի» ծրագիրը Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերության կողմից իրականացվող էԿՈսերվ ծրագրի մաս է, որը մեկնարկել է 2023 թվականի հունվարին, ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Շիրակի եւ Սյունիքի մարզերում:

Գեղարքունիքի մարզում իրականացված ծրագրերի արդյունքում, ընդհանուր առմամբ, 28 համայնքապատկան շենքերում իրականացվել են էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգետիկայի միջոցառումներ:

«Հայաստանի Վերականգնող էներգետիկայի եւ էներգախնայողության Հիմնադրամը» տեղադրել է 15-ից 150 կիլովատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայաններ Մարտունի, Գավառ, Սեւան եւ Ճամբարակ համայնքների թվով 10 հանրային շենքերում, որոնց ցանկում են նաեւ Մարտունու, Գավառի եւ Սեւանի բժշկական կենտրոնների շենքերը:

Նույն ծրագրի շրջանակներում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամի» կողմից Ճամբարակ, Գավառ, Մարտունի եւ Սեւան համայնքների՝ թվով 18 համայնքապատկան շենքերում տեղադրվել են 3-ից 10 կիլովատտ հզորության արեւային կայաններ:

Բացի այդ, Գեղարքունիքի մարզում 141 ընտանիք ստացել է էներգախնայող վառարաններ՝ ներառյալ Արցախից տեղահանված 56 ընտանիքները:

Սեւան եւ Գավառ համայնքներում ընտրված 8 խոցելի տնային տնտեսություններում իրականացվել են ջերմամեկուսացման միջոցառումներ:

Ծրագիրը կավարտվի 2025 թվականի մարտի 31-ին, սակայն համագործակցությունը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ կշարունակվի «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության եւ ԳԴՀ Տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության կողմից եւ իրականացվում Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերության կողմից:

Ծրագիրը մեկնարկել է 2024 թվականի մայիսի 1-ից՝ 3 տարի ժամկետով: Ծրագիրը ձգտում է բարելավել գյուղական համայնքների կարողությունները՝ դիմակայելու եւ հարմարվելու փոփոխվող կլիմայական պայմաններին:

Մարզպետ Կարեն Սարգսյանը, իր գոհունակությունը հայտնելով Գեղարքունիքի մարզում իրականացված էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ծրագրերի արդյունքներից ու համագործակված աշխատանքից, հավելեց, որ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմն այսուհետ էլ կշարունակի հետեւողական աջակցություն ցուցաբերել ընթացքի մեջ գտնվող կամ առաջիկայում նախատեսված ծրագրերի իրականացմանը:

Կարեն Սարգսյանն առաջարկեց՝ էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ծրագրերի իրականացման համար թիրախային ուղղություններ համարել հանրակրթական դպրոցների եւ բուժամբուլատորիաների շենքերը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ԱՅԴԲԱՆ ՈՒՇԱՅԱԾ, ԲԱՅՑ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՈՒ ԱՌԱՏ ԶՅՈՒՆԸ

Փետրվարի 21-ի ողջ գիշերը եւ առավոտյան ժամերին Գեղարքունիքի մարզում վերջապես առատ ձյուն տեղաց, որի արդյունքում մինչեւ 50 սանտիմետր ձնածածկույթ ձեւավորվեց լեռնային գոտիներում ու նախալեռներում, դաշտերում ու աշնանացան ցանքերում:

Խստաշունչ ձմեռն առատ ձյան հետ վերադարձավ փետրվարի երրորդ տասնօրյակում՝ մտնելով իր դիրքի ու դերի մեջ:

Սակայն դրանից միայն ու միայն ուրախանալ է պետք, քանի որ ձյունը մեր լեռնաշխարհի անփոխարինելի բարիքն է ու հարստությունը, ինչը խոստանում է ջրառատ ու բերքառատ տարի, աշնանացանի հաջող ձմեռում, հողի խոնավության պահպանում, այլ օգուտներ:

Չնայած տեղացած առատ ձյանն ու մի քանի օր շարունակվող ձնաբքերին՝ սպասարկող կազմակերպությունները կարողացան ապահովել ճանապարհների անցանելիությունը:

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՈՅԻ ՎՐԵԺԸ
/Քնարահայինական պոեմ/



/սկիզբը՝ նախորդ համարում/

6

Թալինի բերդի գրոհին գնաց
Ու գոռ մարտերին Սարդարապատի,
Հողը հայրենի ոսոխի շնչից
Մաքրեց-զուլալեց զարկով իր բազկի:
Ու Ագրիջայի կռիվը հիշեց
Արմաղան լեռան հայացքի ներքո.
Բախում էր ահեղ սարահարթում մեծ
Վաղ առավոտից մինչ ուշ երեկո...
Զորավարն հզոր՝ Վահանն Աղջնա,
Իր ու Չոլոյի կողքին զարնվեց,
Իրենց հոգատար ձեռքերի վրա
Հսկա ու հերոս հոգին ավանդեց:
Երկու ընկերով ողբացին անձայն
Կորուստը անդարձ հզոր ֆիդայու,
Մարմինը նրա շալակած բերին,
Հասցրին մինչեւ Վերին Գետաշեն:
Եվ անդ սրբացավ մի անմեռ շիրիմ
Հայրենափրկիչ հազարապետի,
Որին բովանդակ հայ ազգն է պաշտում
Գոյամարտերի ճամփին հավերժի...
Հողը հայրենի մի թեթեւ շնչեց
Հաղթանակներից Հայոց բանակի,
Ինքն Սհագչիում մի քողտիկ շինեց,
Որ Մարթայի հետ տուն-տեղ ստեղծի,
Ու շիվեր տնկեց, որ ծառեր դառնան,
Որ պտղակալեն նոր հայրենիքում,
Ամեն մի ընկած զինվորի հոգին
Հարություն առնի այդ պտուղներում:
Մի ձեռքում սուրն էր, մեկում էլ՝ մաճը,
Հրացանն ուսին, մերթ էլ՝ գերանդին:
Երակների մեջ ուժն էր խլրտում,
Արարող ոգին հայ շինականի:
Ու մարտի դաշտում ցասումը թափած՝
Նա նվիրումով հողն էր սերմանում,
Կյանքի էր կոչում երազն իր անբիծ,
Նոր օջախի մեջ թոնիր բորբոքում:
Հողն էլ էր զգում շողն ազատության
Ու իր կենարար ռանչպարի ոգին,
Ջրերն հայրենի կարկաչում էին,
Երկունքի ճիչով օրը լիացնում...
Ինքը կռվում էր այսպես օրնիբուն
Հայերին մորթող ենիչերու դեմ,
Հայրենիք դավող հուդաների դեմ,
Հողը ամլացած դարձնում ծաղկաստան,
Իր ամենազոր ձեռքով մոգական,
Եվ այն պայքարով, որ չուներ սահման
Ու աստղի նման փայլ էր անհատնում:

/շարունակությունը՝ էջ 8-ում/

4.qxd 04/03/2025 14:58 Page 2

ԱՐՑԱԽԸ ՊԵՏՔ Է ԱՊՐԻ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՅԻ ՀՈԳՈՒՄ ՈՒ ՄՏՔՈՒՄ

37 տարի առաջ, փետրվարի 20-ին, Հայկական պատմական 16 նահանգներից մեկը համարվող Արցախի հայությունը վեր պարզեց Ազատության դրոշը՝ ընդդեմ թուրանաադրբեջանական անսանձ բռնատիրության, բռնի ծուլման ու ահագնացող ցեղասպանության: Ժամեր, ապա օրեր անց Ազատության բոցը բռնկեց նախ Հայաստանի, ապա՝ համայն աշխարհի հայությանը: Հետո հայ ազգը բռունցքվեց, դարձավ մի հզոր բանակ ու պայքարելու եւ ապրելու իր իրավունքով տեր կանգնեց իր հայրենիքին, իր արդար դատին՝ կերտելով ռազմական կարեւոր հաղթանակներ ու դնելով Հայկական երկրորդ պետության հիմքերը:

Շուրջ երեք տասնամյակ Արցախը զորանում ու զարգանում էր, ամրապնդվում, շենանում ու ծաղկում, թեկուզ թշնամական սպառնալիքների ու միջազգային խաղացողների մութ դավերի ներքո:



Արցախյան շարժման ու գոյամարտի, պետականակերտ քայլերի շնորհիվ հայ ազգը վերարժեւորեց իր անցյալն ու ներկան, իր ուժն ու կշիռը, բռունցքվելու, համախմբվելու ու համահայկական նպատակներին հասնելու տեսլականը:

Չափազանց արյունոտ, հերոսական ու ողբերգական ընթացք ունեցավ այդ ճանապարհը, որը մեզ համար արժեցավ չորս արյունալի պատերազմ, տասնյակ հազարավոր զոհեր ու վիրավորներ, հարյուր հազարավոր հայ ընտանիքների բռնագաղթ, հայրենազրկում, ու, ի վերջո, Արցախի լիակատար հայաթափում, ինչին թշնամին չէր կարողացել հասնել մոտ 1 հազարամյակի ընթացքում:

Այո, մենք ազգովի արդեն մեկուկես տարի ապրում ենք Արցախի կորստյան կսկիծը, սակայն պետք է տոկանք ու համբերենք, մաքառենք ու հուսանք, որ ամեն ինչ վերջացած չէ, որ ամեն տարվա փետրվարի 20-ին ու նրան հաջորդող Արցախյան հաղթանակների հիշարժան տարեդարձերի օրերին ապրողներս, արցախահայության կողքին, մեր հոգիներում ու մտքերում ապրեցնենք Արցախը, նրա շեները վանքերը, գետերը, լեռները, ամեն մի անկյունը, որը սուրբ է բոլորիս համար, մեր ամրակուռ այն հերոսներին, ովքեր իրենց կյանքի ու արյան գնով գետնեցին մահացու թշնամիներին: Չլիներ այդ մաքառումը, չլինեին այդ հաղթանակները, այդ դեպքում հրեշավոր թշնամիները մեր հայրենիքից հուշ անգամ չէին թողնի՝ սփռելով անսանձ եղեռն, մահ ու ավեր:

Խոնարհումս ու ակնածանքս Արցախյան շարժման, ազատամարտերի բոլոր կազմակերպիչներին, ղեկավարներին ու հերոսներին, պետականության կերտման երախտավորներին:

Ազատությունն օրհնությամբ եղիցի, փառքի լուսապսակով:

Խոսրով Խլղաթյան

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՐՈՂ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ՀՈՎԻԿ ՉԱՐԽՉՅԱՆԻ ՀԵՏ

Փետրվարի 14-ին Վարդգես Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարանում կազմակերպվեց հանդիպում գրող եւ գրականագետ Հովիկ Չարխչյանի հետ:

Հանդիպմանը մասնակցեցին Գավառ համայնքի ընթերցասերներ, Գավառի պետական համալսարանի դասախոսներ, հանրակրթական ու արվեստի դպրոցների մանկավարժներ:

Միջոցառումը նվիրված էր Հովիկ Չարխչյանի «Սուլամիթա. Մեւակի մեծ սերը» գրքին, որը բացահայտում է մեծանուն բանաստեղծի կյանքի ու սիրո անհայտ էջերը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաեւ հեղինակի գրականագիտական աշխատանքներն ու գրական ժառանգության այլ կարեւոր հատվածներ:

Մեծ հուզմունք ու տպավորություն թողեց Պարույր Սեւակի եւ Սուլամիթայի նամակների ընթերցումը, որոնք ներկայացրին Գավառի Լ. Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի ռեժիսոր Նորայր Հերգնյանը եւ դերասանուհի Արմինե Հակոբյանը:

Հուզիչ պահերն առավել առանձնահատուկ դարձրին գրադարանի ընթերցող Լալա Միրիբյանի երաժշտական կատարումները:

-Հանդիպումը հատկապես խորհրդանշական էր, քանի որ այն համընկել էր Սուրբ Սարգսի տոնի հետ: Այս գեղեցիկ օրն ավելի տպավորիչ դարձրեց Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի աշակերտների գեղեցիկ ու բովանդակալից ներկայացումը՝ նվիրված տոնի խորհրդին ու սիրո ուժին: Գրողի եւ հանդիսատեսի միջեւ ծավալված անմիջական ու բովանդակալից երկխոսությունը հնարավորություն տվեց ընթերցողներին՝ ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները: Հանդիպումն անցավ ջերմ եւ մտերմիկ մթնոլորտում,-ներկայացրեց Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը:

Խոսրով Խլղաթյան

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ 166 ՄԻԼԻՈՆ 637,6 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ Է ՀԱՏԿԱՑՎԵԼ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ պետական բյուջեից 166 միլիոն 637,6 հազար դրամ հատկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի կրթական եւ մարզական յոթ հաստատությունների ավարտական աշխատանքների ապահովման, ավարտական շինարարությունների պայմանագրերի վճարման, ինչպես նաեւ մի շարք օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 1 միլիոն 581,6 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Գագարինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցման ավարտական աշխատանքների, 777,7 հազար դրամ՝ Վարդենիս համայնքի Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների ընթացքի, 1 միլիոն 158,9 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման ավարտական աշխատանքների համար:

5 միլիոն 149,8 հազար դրամ հատկացվել է Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղի մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուրմանկապարտեզի կահավորման, 149 միլիոն 072,2 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Լեռնակերտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների, 1 միլիոն 397,4 հազար դրամ՝ Ճամբարակ համայնքի Ջիլի միջնակարգ դպրոցի ավարտական աշխատանքների համար:

7 միլիոն 500,0 հազար դրամ հատկացվել է Վարդենիս համայնքի Արփունք գյուղի մոդուլային կրթահամալիրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՀԱԴԻՊՈՒՄ՝ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒՍԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում, «Նկուղ» ստեղծարար հարթակում, հադիպում է կազմակերպվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի նախագահ Լուսինե Գեւորգյանի հետ:

Հանդիպմանը մասնակցել են ոլորտում գործող ձեռնարկատերեր ու կազմակերպություններ, մարզային եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, զբոսաշրջության զարգացման հնարավորություններով հետաքրքրված անհատներ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են զբոսաշրջության ոլորտի հեռանկարները, Գեղարքունիքի մարզում առկա ռեսուրսներն ու իրականացվող ծրագրերը, զարգացման հնարավորությունները:

«Իրականացվում է նոր օրենսդրական բարեփոխումներ զբոսաշրջության ոլորտում: Զբոսաշրջությունը կթվայնացվի: Կընդունվեն զբոսաշրջության մասին օրենքից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր: Կոմիտեն մշակում է Հայաստանի զբոսաշրջության զարգացման 2025-2029 թվականների ռազմավարությունը: Ցանկացած գործունեության ոլորտ պետք է հիմնված լինի հիմնարար փաստաթղթի վրա՝ ինչպիսին հնգամյա ռազմավարական ծրագիրն է: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը եւ Զբոսաշրջության կոմիտեն ակտիվորեն համագործակցում են Հայաստանում գործող բոլոր դիվանագիտական եւ միջազգային ներկայացուցչությունների հետ արտերկրում կազմակերպվող միջազգային փառատոններին եւ ֆորումներին Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը ներկայացնելու, ինչպես նաեւ մի շարք միջազգային կառույցներին անդամակցելու համար: 2025 թվականին ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեն կներկայացնի Հայաստանը մի շարք միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ Իսպանիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Միացյալ Էմիրություններում, Միացյալ Թագավորությունում: Հայաստանը պետք է աշխարհին ներկայացնի իր «Թաքնված ուղղությունները», որոնց միջոցով կարող են ստեղծվել զբոսաշրջային ավելի մեծ հոսքեր դեպի Հայաստան: Ներկայումս կոմիտեն համագործակցում է համաշխարհային բանկի, Գերմանիայի Դաշնության մի շարք գործակալությունների եւ կազմակերպությունների հետ, որոնց հետ իրականացվում են մի շարք ծրագրեր»,-ներկայացրել է ՀՀ Զբոսաշրջության կոմիտեի նախագահը:

Լուսինե Գեւորգյանի տեղեկացմամբ՝ 2024 թվականին Հայաստան են այցելել 2 միլիոն 208 հազար 179 զբոսաշրջիկ, որը 2023 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ ցածր է 4.6 տոկոսով:

Այս տարի կոմիտեն կաշխատի ներքին զբոսաշրջության ակտիվացման ուղղությամբ: Կանցկացվեն մի շարք փառատոներ, որոնք կներկայացնեն Հայաստանի գրավչությունը: Աշխատանք կա անելու մարզային ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավման ոլորտում: Հյուրասիրության, հյուրկալության, մարկետինգային դասընթացներ կանցկացվեն բոլոր մարզերում զբոսաշրջության ոլորտում գործող տնտեսվարողների հետ: Այդ դասընթացներին կներգրավվեն նաեւ ուսանողները:

Մարզերը կներկայանան իրենց զբոսաշրջային գրավչությամբ Երեւան քաղաքում մայիսին կայանալիք փառատոնին:

Կոմիտեն կշարունակի զարգացնել նաեւ ենթակառուցվածքները: Օրինակ Զբոսաշրջության կոմիտեի եւ Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել են Տաթեւի վանք տանող ճանապարհի, Գյումրու Կումայրի պատմական շրջանի մասնակի վերականգնումը, Գյումրու Հաղթանակ պողոտայի վերականգնումը, Դվինի հուշարձանների վերականգնումը, Գառնի տաճարի տարածքի բարեկարգումը, Քարերի սիմֆոնիա տանող 600 մետրանոց ճանապարհի կառուցումը եւ այլն:

Կզարգանա մարզային կլաստերային զբոսաշրջությունը՝ երեք փուլով, ներկայումս 7 մարզային կլաստերային քաղաքների համար մշակվել եւ գրեթե պատրաստ է զարգացման ծրագրերը, որոնք կտրամադրվեն համայնքին, իսկ համայնքը կիմանա, թե կոնկրետ զբոսաշրջության որ ուղղությամբ ներդրումներ կատարել:

Հանդիպման մասնակիցները հարցեր են ուղղել Լուսինե Գեւորգյանին, ինչպես նաեւ հանդես եկան առաջարկներով եւ կարծիքներով:

Արմինե Ղուկասյան

4.qxd 04/03/2025 14:58 Page 3

ԳԱՎԱՌԻ 10 ՀԱՄՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆՔԻՆԵՐԻՆ ՏԵՂԱԴՐՎԵԼ ԵՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Գավառի համայնքապետարանի ենթակայությամբ գործող թվով 10 ՀՈԱԿ-ների շենքերի տանիքներին տեղադրվել են արեւային ֆոտովոլտային համակարգեր:

Աշխատանքներն իրականացվել են ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, «ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի համար» ծրագրի շրջանակներում, Եվրոպական Միության եւ Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության համաֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակներում Գավառ քաղաքում իրականացվել է «Ձեր արեւային կայանի ապահով եւ արդյունավետ սպասարկումը» թեմայով իրակզեկման դասընթաց, որի ընթացքում ծրագրի շահառու ՀՈԱԿ-ների ներկայացուցիչները ծանոթացել են արեւային ֆոտովոլտային համակարգերի շահագործման ձեւերին ու ծրագրի շրջանակներում իրենց անելիքներին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 17 միլիոն 800 հազար դրամ, որից 9 միլիոն 116 հազար դրամը համաֆինանսավորման սկզբունքով տրամադրել է Գավառի համայնքապետարանը:

Արեւային կայանների տեղադրման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերից եւ ավարտվել 2025 թվականի փետրվարի կեսերին:

Դրանք ընդհանուր ցանցին կմիացվեն առաջիկա օրերի ընթացքում:

Գավառ համայնքում արեւային 8-10 կիլովատտ ժամ արեւային կայաններ տեղադրվել են Գավառի թիվ 3, 5, 7, Սարուխանի թիվ 1,2 , Նորատուսի թիվ 1, 2, Գանձակի մանկապարտեզների, Սարուխանի եւ Գավառի արվեստի դպրոցների տանիքներին:

Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանի հավաստմամբ՝ այս կայանների գործարկմամբ տվյալ հաստատություններում ոչ միայն ձեւավորվում են խնայողություններ, այլ նաեւ քայլեր են արվում՝ այդ խնայողությունների հաշվին նախադպրոցական հաստատությունների ու արվստի դպրոցների տարածքներում գիշերային լուսավորություններ ապահովելու ուղղությամբ:

«Էներգախնայողության հիմնադրամի» փորձագետ Անժելա Մանասյանի տեղեկացմամբ՝ իրենց կողմից ծրագրում ընդգրկելու նախապատվությունը տրվել է այն հաստատություններին, որոնցում նախկինում իրականացվել են էներգախնայողության այլ ծրագրեր:

Ալվարդ Մանուկյան

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ 160-ՐԴ ՏԱՐԵԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված հայ ազատագրական պայքարի հերոս, զորահրամանատար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 160-րդ ամյակին:

Միջոցառման ընթացքում հանդես են եկել մշակույթի տանը գործող դհոլի խմբակի, «Աբգարյան դենս ստուդիո» պարային համույթի սաները, ֆիդայական երգերով՝ մենակատար Գեւորգ Բուռնությանը:

Ներքին Գետաշենի գրադարանի պատանի ընթերցողները ներկայացրել են փաստեր ու դրվագներ մեծ զորավարի կյանքից, մեջբերումներ արել նրա խոսքերից:

Ցերեկույթին մասնակցել են Մարտունու համայնքապետարանի Կրթության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության բաժնի աշխատակիցներ, Ներքին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ռուբեն Զուլոյանը, Մարտունի համայնքի ավագանու անդամներ, Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոնի աշխատակիցներ, ծնողներ, համագյուղացիներ:

Միջոցառման շրջանակներում գեղանկարչուհի Մարիամ Գալստյանը պատկերել է Անդրանիկ զորավարի դիմանկարը:

Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԿ-ՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Փետրվարի 25-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանի ուղեկցությամբ աշխատանքային այց կատարեց Վարդենիսի բժշկական կենտրոն, որտեղ ՀՀ պետական բյուջեի «Առողջապահական ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում եւ մոնիթորինգ» ծրագրի «Առողջապահական համակարգի պետական առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպություններին ֆինանսական աջակցության հատկացում» միջոցառման իրականացման նպատակով հատկացվել է 20 միլիոն ՀՀ դրամ գումար:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվում են Վարդենիսի ԲԿ հիվանդանոցային մասնաշենքի մասնակի ներքին հարդարման եւ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ մինչեւ կմեկնարկի նոր բժշկական կենտրոնի կառուցումը:

Աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի նոյեմբերին, իսկ ավարտը նախատեսվում է 2025 թվականի մայիս ամսին:

Մարզպետը դիտարկեց ԲԿ-ում ընթացող վերանորոգման աշխատանքների ընթացքը, առանձին հարցերի շուրջ տվեց ցուցումներ եւ հանձնարարականներ, ապա հանդիպում ունեցավ բժշկական կենտրոնի բուժանձնակազմի հետ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՅՐԵԼ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ

Մայրենի լեզվի միջազգային օրվա շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթին ու լեզվին նվիրված շնորհանդես, որի ընթացքում ցուցադրվել են դպրոցականների նախագծային աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, նախապես հայտարարված մրցույթի արդյունքում Գեղարքունիքի մարզից այս էքսպոյին հաղթող են ճանաչվել Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ եւ Ջորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոցները: Ջորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոցը ներկայացրել է եզդիական ազգային փոքրամասնության, իսկ Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցը՝ ասորական եւ ուկրաինական ազգային փոքրամասնությունների սովորույթները, ազգային ծեսերը, ավանդույթները, մշակույթն ու խոհանոցը՝ դրանք վեր հանելու եւ հանրահռչակելու նպատակով:

Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում կազմակերպված եզրափակիչ միջոցառմանը, ի թիվս այլ մարզերի մասնակիցների՝ Գեղարքունիքի մարզի դպրոցականները ներկայացրել են իրենց նախագծերն առանձին տաղավարով:

Միջոցառմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանը, եզդիների ազգային միության նախագահ Խդրը Հաջոյանը, Հանրային ռադիոյի խմբագիր, թարգմանիչ Հասան Թամոյանը:

Նրանք շրջել են տաղավարներով, ծանոթացել նախագծերին, հետաքրքրվել՝ ինչ ուսումնասիրություն են կատարել աշակերտները, այդ ընթացքում ինչ նոր գիտելիք են ձեռք բերել ազգային փոքրամասնությունների վերաբերյալ:

Նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է մասնակից դպրոցներին, շնորհակալություն հայտնել կատարած աշխատանքի, նախաձեռնությանն արձագանքելու եւ օրը յուրահատուկ բովանդակությամբ լցնելու համար:

Մասնակից աշակերտները շնորհանդեսից հետո աբոնեմենտային ծրագրի շրջանակում դիտել են «Պատվի համար» ներկայացումը:

«Գեղամա աշխարհ»

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՍԱՐՈՒԽԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը ֆինանսական միջոցներ է հատկացրել Սարուխան գյուղի նախադպրոցական եւ արտադպրոցական հաստատություններին՝ առկա խնդիրները լուծելու եւ աշխատանքները կազմակերպելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում արդեն հիմնանորոգված Սարուխանի թիվ 1 մանկապարտեզում կատարվել են վերանորոգման եւս մի քանի աշխատանքներ. փոխվել է մուտքի դուռը, նորերով են փոխարինվել դռների բռնակները, լուսամուտների վնասված ապակիները, կատարվել են ջեռուցման կաթսայի վերանորոգման, ծխնելույզների տեղադրման աշխատանքներ, փոխվել են ջեռուցման մարտկոցներ, լաքապատվել է դահլիճի եւ մեկ խմբասենյակի մանրահատակը, վերանորգվել են դրսից երկրորդ հարկ տանող աստիճանները եւ ցանկապատի մի հատված: Կատարված աշխատանքների համար Գավառի համայնքապետարանի բյուջեից ընթացիկ դրամաշնորհով հատկացվել է 880 հազար դրամ:

Սարուխանի թիվ 2 մանկապարտեզին էլ կապիտալ դրամաշնորհով տրամադրվել է 1 միլիոն 400 հազար դրամ, որով ձեռք է բերվել դյուրակիր համակարգիչ, գորգ, փոշեկուլ, արդուկ, երկու զգեստապահարան, սեղան եւ դաշնամուր՝ իր աթոռով: Թվարկված ապրանքները անհրաժեշտ էին մանկապարտեզին՝ առօրյա գործունեության համար:

Սարուխանի արվեստի դպրոցն էլ 700 հազար դրամ կապիտալ դրամաշնորհով ձեռք է բերել երկու էլեկտրադինամիկական բարձրախոս-դինամիկ: Դրանց միջոցով առավել արդյունավետ են իրականացվում դպրոցում կազմակերպված միջոցառումները եւ պարարվեստի բաժնի պարապմունքները:

Ալվարդ Մանուկյան

4.qxd 04/03/2025 14:58 Page 4

ՄԵՌՆՈՂ ՈՒ ՀԱՌՆՈՂ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ. ԱՏՈՄ ՀԱԿՈԲՅԱՆ

Ժամանակը կարոտի ճիչ է՝ բազմած սարերի թիկունքին: Սարերը սիրող հոգի են, որ կանչում ու տանում են իրենց սիրահարներին: Արեւորդին ծիրանին ուսին է՝ ծանր գուրզը ձեռքին, հաղթանակների լույսն իր հոգում, հավատը կրծքի տակ, ուժեղ ու անմեկնելի հաստատակամ: Մեռնող ապրողների համաքայլ մենությունը նոր կյանքի սկիզբ է ավետում, ինչու՞ չի խոսում կեղծիքը ու ամեն տեղ լռում է: Փնտրումների ու ծայրահեղ զգացողությունների խաչաձեւածքում մարդու մեծությունը իր փայլն է նետում՝ հավատավոր երամի վրա ու կարոտակեզ հայացքների մեջ այրում պատմության դառը դասերի առվակներով հոսող ճշմարտությունը: Մի՞թե իրոք հեշտ է կանգնեցնել բնականությունը, որ խորհուրդների ազնվագույն առաջնորդիչ ուժն է:

«Ես էլ չգիտեմ՝ ո՛ր հունով գնալ,
Ի՞նչ աշխարհամաս էլ հայտնաբերել.
Ինչպես ընթանալ ու չխենթանալ
Ալիքների մեջ զմրուխտաներեր...»:

Հարցե՛ր, հարցե՛ր ու նրանց փառնաշփոթում հոգու լույսով ապրող բանաստեղծ՝ ում «աչքերին անուրջն է նիրհում», որ հետո «վարդեր ցողի դարերի ադամանդին»՝ ու ապրի «աստեղագանձ» քարափների երգով՝ «Մեռնող ու հառնող դարերի լեգենդներով» հարստացած:

Բանաստեղծ Ատոմ Հակոբյանը զբաղվում է որսորդությամբ: Առաջին հայացքից դժվարանում էի համատեղել՝

«Արյունով լցված այս կյանքի լիճը
Խեղդում է իր մեջ մորը ու ճագին...
Եվ մարդը նույնն է, նույն բիրտ դահիճը,
Երբ ձեռք է մեկնում այն կեռ ճգանին...»:

Խոսքը սուր հնչեց: Ես երկար մտածեցի՝ հավաքագրելով նրա բանաստեղծականությունն՝ այնուամենայնիվ երկու սուր զգացողությունների աշխարհներում համատեղելու կյանքի մահն ու զարթոնքը: Եվ տարօրինակ, թե բնական մտայնությամբ թերթեցի կյանքի այս զավեշտական բարդույթը հաղթահարած եւ նրանից անդին, իր կամքի մեծությունը դրսեւորած անհատի ներքին ուժը, որ մղում է ճաշակել կյանքի շերտերում ընթացող բախումների բնականությունն ու ըմբռնելին, գեղեցկության համադրումը բարձր մարդկային մտքի թռիչքներից, մինչ բնականոն՝ «այսպես է ստեղծված աշխարհը» ձեւակերպումով: Քիչ հետո ավելի մանրամասնորեն կխոսեմ այդ մասին:

Ատոմ Հակոբյանի «ՍՐԲԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ» բանաստեղծությունը կարդալիս հասկացա, որ ընդհանրացումների մի մեծ աշխարհում հայտնվելիս, ցանկությունս ես ունենում անպայմանորեն այն ներկայացնել հանրությանը, որ որեւէ գրասեր մեկը, զերծ չմնա բանաստեղծի գրչի ներքին հմայքը կրելու հաճույքից...

«Եվ որսորդական իմ կեռ դանակով
Կրծքաբաց ուռու փչակի ծոցում
Քերել եմ սրտիս արյունե հանգով
Քո անունը լույս ու հասկալեցուն...»:

Նա գիտի, համոզված է, որ իր ներքին խորքերի անսովոր գեղեցկությունները ուրիշ աշխարհի են պատկանում, որ այսպես հեշտ չի լինում նրա գոյությունն իր սովորական թվացող կենսական թարթումների մեջ: Ասում է՝

«Իմ ճիչը վայրի, իմ սիրտն ու սերը,
Իմ ա՜յլ աշխարհի դաշնությունն անմեղ,
Իմ գիժ ինքնության բնագծերը
Եվ իմ տխրության առուներն անեղծ...»:

Բանաստեղծը տանում է իր սարսուռների ետեւից՝ կամաց ու աննկատ խորացնելով այնտեղ, ուր ընթերցողն ինքն է բացահայտում իրեն՝ իր դժվարընթաց կյանքի մուտքերում ելքեր փնտրելու փափագով: Նենգ օրերի հերթական արշավով մտահոգ, փնտրումների անորոշությամբ ընթացող անհատի հոգում լուսեղեն եզրեր որոնելու մարմաջն է: Այն կրծքի տակ է, շատ մոտ, նրա անրջական փայլի մեջ կուրացող ու կյանքի երանության բաղձանքը սրտում:

«Իմ մոլորակը՝ տասներորդական,
Իմ մոլորակը անաղարտ թողեք.
- Հորիզոնները քո անեզրական
Ուրի՛շ փչակի մեղվաթույն են, ե՞րգ...»:

Շա՛տ գեղեցիկ, բարձր ու հզոր արարումներ: Ոգեղենության, ինքնաբավ ամրոցների պես՝ զուտ անձեռնմխելի տիրույթներում:

«Իմ սերը քո սուրբ ափերում աճեց,
Ու մաքուր եմ ես, զի մաքուր ես դո՛ւ...»

Բանաստեղծը սեր է երգում, կարոտ, ոգեշնչում, խիզդ, երազ՝ իր «հաստատակամ» մոլուցքներում, ամուր, հողեղեն, լիարժեք ու նաեւ, ինչպես ինքն է ասում՝ «Անանձնապատկան», որ տարանջատումների միջակայքում միշտ հաղթող է, միշտ համոզված ու ձգտող:

Բանաստեղծը քարտեզագրել է կյանքը՝յուրովի: Իր առանձնության մեջ վայրի, բայց վայրի ոգեղենությամբ ու ներսային ինքնատիպությամբ:

Ատոմ Հակոբյանի բանաստեղծություններում հայրենիքը յուրովի ըմբռնում է՝

«Մուշը-երկիր, Մուշը-երկինք,
Մուշը-մանանա.
Կապույտի մեջ- կապույտ կնիք,
Ու կապույտ է նա...»:

Սրտի խոսք է՝ ներքին հրաբորբոք այրում, բառի մեջ թափանցող կարոտի ցավ ու չի հապաղում բանաստեղծը՝

«Որ տարաբախտ մոր ու մանկանց
Աչքերը հիշեմ,
Սեղմեմ կրծքիս՝ ավերակաց
Ամեն օջախ ու շեն...» եւ գիտի տեղը ցավի ու ողբերգության, թեթեւ կյանքի անիմաստությունն ու բարդույթը նրա, որ վերածվում է ինքնագիտակցական խորհրդի՝

«Գիտե՞ք-հանց գնացք ռելսերին հոսուն՝
Հեշտը տրված չէ՞ բանաստեղծներին...»:

Մտքումս մի քանի անգամ կրկնեցի այս վերջին նախադասությունը, երբ թերթեցի Ատոմ Հակոբյանի արձակ ստեղծագործությունները: Ոչ մի տեղ կանգ առնել հնարավոր չէր: Շնչարգելության աստիճանի ծանր հոգեկան վայրիվերումների մեջ պիտի մարդկայնորեն վերլուծես կյանքի ու մահվան, ավելի ճիշտ սպանողի ու մահացողի հոգեկան տանջանքները՝ գիտակցաբար եւ ենթագիտակցական ողբերգության ծանրությամբ: Ինչպե՞ս է կարողանում բանաստեղծական հոգին իր մեջ խլացնել «մարմնի տառապանքը», երբ այն հենց ինքն է երկնել:

Բարձր է Ատոմ Հակոբյան՝ անհատի գիտակցական խելամտությունը, ֆիզիկական տառապանքի հանդեպ նրա խոհական մոտեցումներով ու իրական աշխարհի բիրտ համատեղումների հաղթահարումներով: Անվերջ կարելի է խոսել, բայց ավելի լավ է պարզապես կարդալ եւ ճանաչել նրա գրի բացառիկ որակներն ընկալելու՝ իր եւ ընթերցողի մոտեցումների տարաձայն հակամարտությունն ու միասնականությունը:

Նա այնքան հարուստ է հոգով, փայլում է առանձնահատուկ բանիմացությամբ ու լայնածավալ ներշնչումների ֆոնին չկան սեղմ սահմաններ՝ անընդգրկելի խորությունների վրա են հորդում խոհականության ճշմարտությունն ու իրականության բախումների ցավը:

Իրարամերժ զգացողությունների բախումներով, վայրի գեղեցկության սիրահոժարությամբ, բառարվեստի խստությամբ, երբեմն ինքնամերժումով, երբեմն հաղթականորեն, ամրագրված ու ոգեկոչ, բայց տիրական, ահա այսպիսի բարձր տպավորություններով ավարտեցի Ատոմ Հակոբյանի ստեղծագործությունների ընթերցումն ու գրառումս սիրով հանձնում եմ Ձեր դատին..

Միայն ուժեղ մարդիկ են կարողանում համատեղել ծայրագույն բեւեռներ՝ կյանքում եւ ստեղծագործական աշխարհում: Դա է նրանց ներքին ամբողջի կարեւոր բովանդակությունը եւ նրանք պատրաստ չեն ենթարկվել այլ ուժերի, որոնք խլում են մարդուն իրենից եւ փորձում կեղծել...

ԼԵՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մշակույթի հայկական ֆոնդ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՆ ՍՏԱՑԵԼ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՁԻԹՀԱՆԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՏԱՐԱԾՔԻ ԽԱՉՔԱՐԸ

Հուշարձանի կարգավիճակ են ստացել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղի Ձիթհանը եւ նույն վայրում գտնվող խաչքարը:

Ինչպես տեղեկացրեց Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի վարչական ղեկավար Արարատ Սաֆարյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագիտական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 24-ի նիստի եզրակացությամբ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ գյուղի Ձիթհանը, որը կառուցվել է 19-րդ դարում, ստացել է տեղական նշանակության հուշարձանի կարգավիճակ, իսկ նույն վայրում գտնվող խաչքարը, որն իր պատրաստման ոճով թվագրվում է 11-12-րդ դարերով՝ հանրապետական նշանակության հուշարձանի կարգավիճակ:

-Ձորագյուղ բնակավայրի 2-րդ փողոցի թիվ 5 հասցեում պահպանվել է 19-րդ դարի կառույց հանդիսացող Ռեսի ձիթհանը եւ նույն տարածքում գտնվող եւ 11-12-րդ դարերի թվագրմամբ խաչքարը, որոնք վերջերս արժանացել են մեր իշխանությունների ուշադրությանը: Պահպանված ձիթհանի քարը, ծանրոցները բարձրացնող եւ իջեցնող պողոսակը պատմական նշանակություն են հաղորդում հուշարձանին, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ տասնամյակներ շարունակ մեր կենցաղից այլեւս դուրս են եկել ձիթհանները: Համապատասխան հանձնաժողովի կողմից Ռեսի ձիթհանին տրվել է տեղական նշանակության հուշարձանի կարգավիճակ, իսկ խաչքարին՝ հանրապետական նշանակության հուշարձանի կարգավիճակ: Ռեսի ձիթհանը եւ խաչքարը համալրում են մեր տարածաշրջանի հարուստ պատմամշակութային ժառանգության ցանկը: Նման որոշումը շատ կարեւոր է ու նպաստելու է, որպեսզի մենք կարողանանք էլ ավելի խնամքով ու հոգատար կերպով պահպանել ու եկող սերունդներին փոխանցել դարերի խորքից մեզ հասած ու մեր ժողովրդի հոգեւոր ու նյութական պատմամշակութային ժառանգությունները: Մեզ մնում է հավուր պատշաճի հանրահռչակել այս հուշարձանները՝ դրանք արժանացնելով տեղացի կամ արտասահմանցի զբոսաշրջիկների ուշադրությանը: Ի դեպ, ժամանակին, ավելի քան կես դար առաջ, իր «Գնացել են անդարձ» հայտնի երգի մի քառյակում Ռեսի ջրաղացին անդրադարձել է ձորագյուղցի անվանի երգահան-բանաստեղծ Հայրիկ Ղազարյանը.

Ռեսի ձիթխացի գոմշի փնչոցը,
Գելյասի հասնելը, կախտան ճռռոցը,
Ջագյան զմբիլների ձեթ ճլճլոցը
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Այս քառյակը, խոշոր տառերով, տեղ է գտել Ռեսի ձիթհանի պատերին,-ներկայացրեց Ձորագյուղի վարչական ղեկավար Արարատ Սաֆարյանը:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանում տեղի են ունեցել հանրային լսումներ՝ «ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» եւ «ԲԱՅԱԶԵՏ ՍԱՆԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ների կողմից Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում նախատեսվող 8050 ԿՎտ հզորությամբ արեւային ֆոտովոլտային կայանների կառուցման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:

Հանրային լսումներին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Գավառի համայնքապետարանի, Գավառի ավագանու անդամների, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ, փորձագետներ եւ բնակիչներ:

Ծրագրերն իրականացնող «ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» եւ «ԲԱՅԱԶԵՏ ՍԱՆԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ների պատասխանատուները ներկայացրել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականները եւ նախագծերին վերաբերվող մանրամասներ եւ պատասխանել ներկաներին հետաքրքրող հարցերին:

Կարեւորելով ծրագրի հատկապես սոցիալական բաղադրիչը՝ հանրային լսման մասնակիցներն իրենց դրական կարծիքն են հայտնել իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

8, 05 մեգավատտ հզորության արեւային ֆոտովոլտային երկու կայանները՝ 16, 010 մեգավատտ ընդհանուր հզորությամբ, կկառուցվեն Գավառ քաղաքի վարչական տարածքում: Շինարարական աշխատանքների մեկնարկը կտրվի առաջիկայում եւ կավարտվի 2025 թվականի վերջերին:

Ալվարդ Մանուկյան

4.qxd 04/03/2025 14:58 Page 5

ԴՈՒՆՈՒՇԸ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Սեւ պատերի մեջ մնացած մայր ու աղջիկը ծանր էին տանում մխիթարող հարեւանների բացակայությունը: Մրոտ տան պատերի սեւ խոռոչներից սարսափ էր թափվում նրանց վրա, հարազատ տունը փլուզված եւ ավերված էր երեւում, որի անկյուններում թանձրացած դժբախտությունը սպանիչ ազդեցություն էր գործում Դունուշի եւ Ռափոյի վրա: Նրանք հուսահատ ու թուլացած անկողին մտան՝ որդեկորույս մոր եւ եղբայրներին կորցրած քրոջ հառաչանքներով:

Գիշերվա կեսին Սուսանն ու Շուշիկը այցելեցին նրանց: Սակայն Դունուշի տան երդիկի չափ պատուհանից տեսան, որ սյունից կախված լամպը վառվում է, եւ մայր ու աղջիկը քնած են Դունուշի անկողնում: Այդ հանգամանքը նրանց հանգստացրեց, ու վերադարձան՝ առանց արթնացնելու հոգնած ու տանջված թշվառներին:

Լուսաբացին նրանք արթնացան: Կարճատեւ քնից գոյացած էներգիասն բավական էր՝ ընդհատված լացն սկսելու համար: Լալիս էին մայր ու աղջիկ՝ գլուխները ծեծելով եւ մազերը պոկելով: Դունուշն այդ պահին նման էր ձագերը կորցրած սագի, որ կռկռալով հրապարակում էր մայրական ողբը: Հարեւանները նորից հավաքվեցին, նորից սիրտ տվեցին ու մխիթարանքի խոսքեր ասացին: Սակայն կորստի մեծությունը լցրել էր մխիթարվելու տեղերը եւ ամուր փակել:

Ոչ ոք չէր կարող համոզել Դունուշին, որ հաշտվի կատարվածի հետ: Ավելին, ովքեր փորձում էին խոսել այդ մասին, դառնում էին Դունուշի աչքի փուշը: Եվ շատերի մոտ այն կարծիքն է ստեղծվում, որ հիսունվեցամյա կինը չի կարող դիմանալ ծանր վշտին եւ այդ ցավով էլ գնալու է աշխարհից:

Անցան օրեր, շաբաթներ, անցան ամիսներ: Դունուշն ու Ռափոն սկսեցին սովորականի նման քթքթալ իրենց տանն ու դռանը, այնուհետեւ սկսեցին աշխատել կոլտնտեսությունում, որպեսզի աշխօր վաստակեն, վարձատրություն ստանան եւ քաղցած չմնան: Դունուշը զարմանալիորեն փոխվել էր: Նա, դուրս ցցված ուսերով ու կորացած մեջքով, իրեն հպարտ էր զգում ու ծանրագույն պարտքը հատուցած: Այդ անգրագետ ու աստվածավախ կնոջ մոտ հասունացել էր այն գաղափարը, որ ինքն հպարտանալու համար ավելի շատ իրավունք ունի, քան ուրիշները: Նա հայրենիքի համար կորցրել էր իր զույգ տղաներին, կորցրել էր իր ունեցած-չունեցածը, կորցրել էր անմնացորդ ու հավերժորեն: Հայրենիքի համար զոհված Հայկի եւ Միշայի սխրանքը հպարտանալու այնպիսի աղբյուր էր, որ Դունուշի մոտ կարող էր ստեղծել ոչ միայն հպարտանալու, այլեւ համբերությամբ խիզախելու գաղափար: Նա մտածում էր, որ գյուղում միայն Ոսկանի Սմբատի կին Անահիտը կարող է ավելի հպարտ լինել, քանի որ հայրենիքի համար զոհվել էին նրա երեք որդիները՝ Խաչիկը, Հայաստանը եւ Խորենը: Անահիտից բացի ուրիշ մի մայր տվյալ գյուղում չի կարող համեմատվել Դունուշի հետ:

«Վիշտը՝ վիշտ, հպարտությունը՝ հպարտություն,- մտածում էր Դունուշը,- երկու տղա ունեի, երկուսն էլ մատաղ եղան հայրենիքին, դա քի՞չ բան է»:

Իրոք, Դունուշը մայրական վեհությամբ կարող էր դատապարտել Ադոյին եւ նրա նմաններին, որոնք խաղաղ պայմաններում հաջողացնում են դառնալ պաշտոնյաներ, կորզել եւ յուրովի ծառայացնել կառավարության վստահությունը, իսկ պատերազմների ժամանակ դավաճանել հայրենիքին եւ անցնել թշնամու կողմը:

Այդ ժամանակներում մարդիկ վախենում էին շփվել քաղբանտարկյալների հարազատների հետ: Վախենում էին, որովհետեւ այդպիսիները հաշվի էին առնվում ժողովրդի թշնամի Բերիայի եւ նրա դրածոների կողմից, որոնց տրված էր անսահման շատ իրավունք: Դունուշի եւ Ռափոյի նկատմամբ այդ վերաբերմունքը չէր նկատվում, քանի որ գյուղի մարդիկ ամբողջովին համոզված էին Տիգրանի անմեղության եւ զրպարտվածության մեջ: Ավելին, նրանք ավելի շատ սրտացավ վերաբերմունք էին ցույց տալիս Դունուշի ու Ռափոյի նկատմամբ եւ օգնում նրանց: Այդ առթիվ Դունուշի եւ Ռափոյի երբեմնի ընկճվածությունը կորել էր, նրանք հասարակության մեջ իրենց զգում էին լիիրավ կին եւ քաղաքացի: Կային երիտասարդներ, որոնք խնդրում էին Ռափոյի ձեռքը, սակայն նա հրաժարվում էր ամուսնանալուց, որպեսզի իր մայրը, ավելի ճիշտ՝ ծերացած մայրը, մենակ չմնա:

Սեւ լաչակի տակից դուրս ընկած եւ ճերմակ ծաղիկների նման փնջված սպիտակ մազերը, սովորականից շատ ցցված ուսերը, թառամած եւ կնճռոտ դեմքը, ազդեցիկ նայվածքն ու լռակյացությունը Դունուշին զինել էին դուրեկան պատկառանքով, որ մագնիսի նման դեպի իրեն էր քաշում մարդկանց համակրանքը եւ ուշադրությունը:

Հաճախ նա լուռ, ինքնամոռաց ձեւով ու անշարժ կանգնում էր որեւէ տեղ ու հայացքը հառում ինչ-որ կետի: Այդպիսի դիրքով նման էր պատկառազդու արձանի, եւ մարդիկ նրան նայում էին, ինչպես նայում են Մայր-արձանին:

Պատերազմն, իր կործանիչ հետեւանքներով հանդերձ, շատ բան բացահայտեց եւ շատ մարդկանց ստուգեց: Պատերազմը ցույց տվեց, որ բազմաթիվ «երդվյալ կոմունիստ» ադոներ դավաճանեցին հայրենիքին ու ժողովրդին, իսկ թշնամու պիտակով զրպարտված բազմաթիվ մարդիկ իրենց դրսեւորեցին որպես անձնուրաց հայրենասերներ եւ իրենց ողջ գերդաստանով կռվեցին ֆաշիզմի դեմ ու ընկան հանուն հայրենիքի:

Դունուշը եկել էր նոր գիտակցության եւ այդ բանը լավ էր հասկանում: Ոչ միայն հասկանում էր, այլեւ համոզված էր, որ վերջիվերջո արդարությունը կպատռի կեղծիքի վարագույրը եւ համարձակորեն կբացահայտի մեղավորներին:

Հայրենիքի համար Հայկի եւ Միշայի զոհվելու պատիվը Դունուշին լիուլի բավարարում էր: Նա միաժամանակ հույս ուներ՝ արժանանալ Տիգրանի արդարանալու պատվին: Այդ դեպքում, ինչպես ասում են, Դունուշն իրեն փիղ կզգար եւ կհամարձակվեր ադոների ականջը ոլորել:

Սուգ ու շիվանի մեջ կուրացած կինը երկար ու բարակ մտածելուց հետո որոշել էր լինել պետական անվտանգության կոմիտեի շրջանային լիազորի մոտ եւ իմանալ իր ամուսնու մասին: Նրան ընդունեց լիազորի տեղակալ Մուսոյանը՝ մի երիտասարդ մարդ, որը ճանաչում էր Դունուշին, քանի որ թե՛ Դունուշը, թե՛ Ռափոն նրա մոտ հաշվի էին առնված անբարեհույսների ցուցակում:

Բայց Մուսոյանը երեք տարի առաջ պարտքի տակ էր մնացել Դունուշի որդի Հայկի մարդկային վերաբերմունքի հանդեպ: Դեպքը տեղի էր ունեցել այսպես. Ֆուտբոլի հրապարակում Մուսոյանը «Իժ» մոտոցիկլետով վարժություններ կատարելիս մոտոցիկլետի հետ միասին արագությամբ զարկվել էր մարզադաշտի եզրի մեծ ծառին եւ ուշագնաց ընկել գետնին: Այնտեղ հավաքված բազմաթիվ մարդկանցից միայն Հայկն էր մոտեցել նրան, ուշքի բերել, բարձրացրել եւ կատարյալ օգնություն ցույց տվել: Այդ օրվանից Մուսոյանը երախտապարտ էր զգում հանգուցյալ Հայկի նկատմամբ: Կամա, թե ակամա այդ երախտագիտությունը պետք է ցուցաբերվեր նաեւ Հայկի մոր՝ Դունուշի նկատմամբ: Սակայն Մուսոյանը, որ սրտանց ուզում էր հատուցել իր նկատմամբ եղած լավությունը, խուսափեց Դունուշից, ոչ մի կարեկցություն ցույց չտվեց նրան եւ պահանջեց, որ իր գրասենյակից դուրս գնա: Մուսոյանը այդպես վարվեց, որպեսզի իրեն չկասկածեն «ժողովրդի թշնամիների» հետ կապ ունենալու մեջ: Այդ բնագավառի մարդիկ պարտավոր էին այդպես վերաբերվել: Դունուշը հասցրեց նրան ասել, որ ինքը հայրենիքի համար զոհվածների մայր է եւ հաստատ համոզված է իր ամուսնու անմեղության մեջ:

-Իմ խեղճ Տիգրան,- ասաց Դունուշը,- քո զավակների թափած արյունն էլ քեզ չօգնեց: Ե՞րբ կլնի, որ քո անմեղությունը պարզվի:

Մուսոյանը ներքուստ նեղվում էր, քանի որ Հայկի արարքն իր նկատմամբ մոռանալ չէր կարող: Նա հաճախ էր մտաբերում, որ ֆուտբոլի հրապարակում մոտոցիկլետով վթարի ենթարկվելու պահին դաշտում կային հարյուրից ավել տարեց ու երիտասարդ մարդիկ, սակայն միայն Հայկը մոտեցավ ու օգնեց իրեն: Դա նշանակում էր, որ մարդիկ իրեն չէին սիրում եւ չէին ուզում օգնել:

Մուսոյանի վերաբերմունքով Դունուշի ընկճվածությունը չավելացավ, ավելին, զորացավ նրա հպարտությունը, քանի որ թոնրատան պատերից դուրս չեկած կինը կարողացավ զգալ պաշտոնավորի փոքրությունը:

Դունուշը դուրս եկավ Մուսոյանի գրասենյակից եւ քայլերն ուղղեց դեպի տուն: Ճանապարհին նրան հանդիպեցին Սուսաննա Զարգարյանն ու Շուշիկ Չոբանյանը, որոնք մանկատուն էին գնում՝ ծնողներին բոլորովին կորցրած մի քանի երեխաների հետ զրուցելու եւ նրանց հասցեները ճշտելու նպատակով: Այդ եւ նման շատ բարեգործություններ նրանք կատարում էին հասարակական կարգով եւ խղճի թելադրանքով: Իսկույն մոտեցան Դունուշին, իմացան բանի էությունը եւ թեւանցուկ արած՝ նրան հասցրին իր տունը: Նրանք Դունուշին պատմեցին, որ ռազմաճակատում ֆաշիստները իրար հետեւից պարտություններ են կրում եւ ջախջախվելուվ դուրս քշում երկրի քաղաքներից ու գյուղերից: Այժմ Դունուշին ուրախանալու ոչ մի բան չկար, բացի սովետական զորքերի հաղթանակից: Նա ուրախացավ այդ լուրով: Ոմանց կարող էր թվալ, թե Դունուշին չեն հետաքրքրի այդ լուրերը: Չեն հետաքրքրում, որովհետեւ նա քաղբանտարկյալի կին է եւ համարվում է սովետական կարգերի թշնամի: Սակայն այդ կարծիքը նրա նկատմամբ զրպարտություն էր եւ գալիս էր Ադոների ու չեկիստների կազմած ակտերից: Ավելին, տղաներին կորցնելուց հետո Դունուշը իր հույսն ու ապավենը համարում էր հայրենիքը, քանի որ նրա գրկում էին թաղված իր սիրասուն տղաները:

Հայրենիքի հաղթանակը, իրոք, ուրախացնում էր նրան, մանավանդ այն բանի համար, որ պատերազմն ավարտվելուց հետո կառավարությունը կջոկեր թացն ու չորը պատշաճ ձեւով, կգնահատեր հայրենասերների ծառայությունը եւ դավաճանների թշնամությունը: Վերջապես կբացվեր զրպարտիչների դիմակը, եւ իր Տիգրանն էլ կարդարանար: Դա նրա փայփայած երազանքն էր, որը կարող էր իրականանալ միայն ու միայն հայրենիքի հաղթանակով:

Վերջապես՝ Դունուշի հայրենասիրությունը ձեւավորվել էր հայրենի օջախում: Նա հայրենասիրությունն ու մարդասիրությունը սովորել էր իր ծնողներից, պապերից ու տատերից: Հայրենիքը նրա համար սրբության սրբոց էր: Իսկ պատերազմում զոհված նրա տղաները իրենց գործադրած հայրենասիրությամբ ու խիզախությամբ ապացուցեցին, որ ծնողները նրանց դաստիարակել են ջերմ հայրենասիրությամբ: Ահա թե ինչու Դունուշն ուրախանում էր վերջին լուրերով եւ այդ օրվանից սկսած միացնում էր իր տան մրոտ սյանը մեխով ամրացված ռադիոբարձրախոսը եւ լսում ռազմաճակատի վերաբերյալ լուրերը, որոնք օրավուր հուսադրում եւ ուրախացնում էին նրան:

/շարունակելի/

Արտաշ Ստեփանյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԼԻԳԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԸ

2025 թվականի մարտի 1-ից ՀՀ Գեղարքունիքի մարզում մեկնարկել է «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի համայնքային փուլի մրցումները:

Բասկետբոլի լիգան անցկացվում է 2 տարիքային խմբով՝ 10-12 տարեկան (5-6-րդ դասարաններ) եւ 13-15 տարեկան (7-9-րդ դասարաններ) դպրոցականների թիմերի միջեւ: Թիմի կազմում ընդգրկած են թե՛ տղաներ եւ թե՛ աղջիկներ: Դաշտում խաղի ընթացքում միաժամանակ գտնվում են 3 տղա եւ 2 աղջիկ կամ 2 տղա եւ 3 աղջիկ: Թիմերին իրավունք է տրված՝ համայնքային փուլի մասնակցության նախնական հայտում ներկայացնել մինչեւ 12 աշակերտ: Յուրաքանչյուր համայնքային փուլից առաջին տեղ գրաված դպրոցական թիմն իրավունք է ստանում՝ համայնքը ներկայացնելու մարզային փուլի մրցումներում:

Մարտի 1-ին Սեւանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցում պայքարի մեջ են մտել Սեւանի համայնքային փուլին հայտ ներկայացրած 5-6-րդ դասարանցիների դպրոցական թիմերը: Ծավալված հետաքրքիր պայքարում հաղթող է ճանաչվել Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոցի թիմը: Երկրորդ եւ երրորդ տեղերը համապատասխանաբար գրավել են Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ եւ Սեւանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոցների թիմերը: Մարտի 2-ին մրցապայքարի մեջ են մտել 7-9-րդ դասարանցիների դպրոցական թիմերը: 1-ին մրցանակային տեղը գրավել է Դդմաշեն գյուղի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղում էր Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականում՝ Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը:

Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոց մարզադահլիճում մարտի 1-ին պայքարի մեջ են մտել Մարտունու համայնքային փուլին հայտ ներկայացրած 5-6-րդ դասարանցիների դպրոցական թիմերը: Այս տարիքային խմբում առաջին հորիզոնականը զբաղեցրել է Վերին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ հորիզոնականում էր Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան, իսկ երրորդ հորիզոնականում՝ Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցների թիմերը: Հաջորդ օրը հետաքրքիր եւ համառ մրցապայքար է ծավալվել 7-9-րդ դասարանցիների դպրոցական թիմերի միջեւ, որի արդյունքում հայտնի են դարձել կիսաեզրափակիչ անցած թիմերը: Մրցանակային տեղերի համար պայքարը կշարունակվի մարտի 9-ին:

Սեւանի եւ Մարտունու համայնքային փուլերում մրցանակային տեղեր գրաված դպրոցական թիմերը խրախուսվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հավաստագրերով:

Ճամբարակում բասկետբոլի լիգայի համայնքային փուլը կմեկնարկի մարտի 9-ին, իսկ Գավառում եւ Վարդենիսում՝ մարտի 15-ին:

Գեղամ Չարվադարյան

4.qxd 04/03/2025 14:58 Page 6

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ-2025» ՄԱՐԶԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում անցկացվեց «Գեղարքունյաց Ձմեռ-2025» մարզական- մշակութային միջոցառում-տոնակատարությանը՝ «Լինենք առողջ» խորագրով:

Միջոցառմանը մասնակցեցին Սեւան համայնքի հանրակրթական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի աշակերտներն ու սաները, մարզասերներ, բնակիչներ:

Ս. Ձաքարյանի անվան մշակույթի պալատի հարակից տարածքում տոնակատարությունը մեկնարկեց ցուցադրական ելույթներով. հանդես եկան «Նվիրյալներ» ռազմամարզական ՀԿ թաեքվոնդոյի խմբի սաները:

Իրենց մարզական կարողություններ-ը ցուցադրեցին Սեւանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բռնցքամարտիկները:

Ցուցադրական ելույթներին հաջորդեցին նախապես հայտարարված մարզախաղաձեւերից անցկացվող մրցումները՝ անհատական եւ թիմային ձեւաչափերով:

Հետաքրքիր եւ լարված մրցումները գնահատվեցին մրցավարների կողմից, ամփոփվեցին արդյունքները:

Կշռաքարի բարձրացում մարզաձեւում 1-ին մրցանակային տեղը գրավել է Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի սան Արման Դագարյանը, 2-րդ մրցանակակիր է դարձել Սեւանի համայնքի Չկալովկա բնակավայրի միջնակարգ դպրոցի աշակերտ Արմեն Մալխասյանը, 3-րդ տեղը զբաղեցրել է Լճաշեն բնակավայրի միջնակարգ դպրոցի աշակերտ Նվեր Սանամյանը:

Պարանի ձգում մարզաձեւում 1-ին տեղ է գրավել Չկալովկա բնակավայրի միջնակարգ դպրոցի, 2-րդ տեղը՝ Սեւանի թիվ 5 միջնակարգ դպրոցի, 3-րդ տեղը՝ Սեւանի թիվ 4 հիմնական դպրոցի թիմերը:

Ազգային կոխ մարզաձեւում 1-ին տեղ է Կարեն Գալստյանը՝ Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց, 2-րդ տեղ՝ Արծրուն Հայրապետյանը՝ Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց, 3-րդ տեղ՝ Գոռ Մարգարյանը՝ Յա. Ձարոբյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց:

Նետում նշանակետին մրցաձեւի 1-ին մրցանակակիրը Լեւոն Վարդանյանն էր՝ թիվ 4 հիմնական դպրոց, 2-րդը՝ Ռոզա Կատվալյանը՝ Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց, 3-րդ տեղը զբաղեցրել է Սիլվի Մարտիրոսյանը՝ Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց:

Մինի ֆուտբոլ մարզաձեւում լավագույն եռյակն այսպիսին էր՝ 1-ին մրցանակային տեղ՝ Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի թիմ, 2-րդ տեղ՝ Լճաշենի միջնակարգ դպրոց, 3-րդ տեղ՝ Սեւանի թիվ 4 հիմնական դպրոց:

Վոլեյբոլ մարզաձեւի եւ նարդի խաղի մրցումներն անցկացվել են Սեւանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում:

Վոլեյբոլ մարզաձեւում աղջիկների լավագույն թիմը մարզադպրոցի թիմն էր, երկրորդ մրցանակային տեղը զբաղեցրել է Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Սեւանի թիվ 5 միջնակարգ դպրոցի աղջիկների թիմը:

Վոլեյբոլի՝ տղաների մրցապայքարում առաջին մրցանակային տեղը զբաղեցրել է Սեւանի թիվ 5 միջնակարգ դպրոցի թիմը, երկրորդ մրցանակակիր էդարձել Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցի թիմը, լավագույն եռյակը եզրափակել է Չկալովկա բնակավայրի միջնակարգ դպրոցի թիմը:

Նարդի խաղաձեւում մրցանակակիր է դարձել Սեւան համայնքի բնակիչ Արամ Բարսեղյանը, երկրորդը Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակից Էդուարդ Սիմոնյանն էր, երրորդ մրցանակային տեղը գրավել է Սեւան համայնքի բնակիչ Գերասիմ Կիրակոսյանը:

Հրաձգության մրցումներն անցկացվել են ՈՄԱ մարզասրահում: Առաջին մրցանակային տեղը զբաղեցրել է Սեւանի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտ Նարեկ Քառյանը, 2-րդ մրցանակակիր է դարձել Լճաշեն բնակավայրի միջնակարգ դպրոցի աշակերտ Արսեն Պողոսյանը, լավագույն եռյակը եզրափակել է Սեւանի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտ Դավիթ Ստեփանյանը:

Յուրաքանչյուր մարզա եւ խաղաձեւից մրցանակային տեղեր զբաղեցրածները եւ լավագույն մասնակցությունը դրսեւորած հաստատությունները խրախուսվեցին համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի կողմից պատրաստված հավաստագրերով, շնորհակալագրերով:

Մարզամշակութային տոնակատարության մասնակից լավագույն ուսումնական հաստատություն ճանաչվեց Սեւանի Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը:

Արմինե Ղուկասյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ՝ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

Գեղարքունիքի մարզի դպրոցականները դրամական մրցանակների են արժանացել «Թռիչք գրքի թեւերով» խորագիրը կրող ընթերցանության մրցույթում:

Գեղարքունիքի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանի տեղեկացմամբ՝ «Բվիկ» կրթական հիմնադրամը 2024 թվականից 14-18 տարեկան երեխաների համար կազմակերպել էր ընթերցանության մրցույթ՝ բաղկացած երկու փուլից:

Առաջին փուլը 211 մասնակցից առցանց հաղթահարել եւ եզրափակիչ փուլ էին անցել 66 մասնակից:

Յուրաքանչյուր մասնակից ընթերցել է 20 գիրք, մասնակցել 10 դասընթացի (7 գրքի քննարկում եւ 3 փափուկ հմտությունների զարգացման դասընթաց):

Իսկ օրերս ամփոփվել են ընթերցանության մրցույթի արդյունքները, իսկ հաղթողները՝ պարգեւատրվել:

Մրցույթի գլխավոր հովանավոր «Իդրամ» վճարահաշվարկային ընկերությունը պարգեւատրել է երեք լավագույններին՝ ոգեշնչելով նրանց՝ շարունակել ընթերցանության հրաշալի ճանապարհը: Գլխավոր հաղթողը Արմավիրի մարզի Փարաքարի միջնակարգ դպրոցի սան Մերի Տոնոյանն է, ով պարգեւատրվել է 300 հազար դրամով: Երկրորդ տեղը զբաղեցրել է Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտ, Գեղարքունիքի մարզային գրադարանի լավագույն ընթերցող Սիփան Կիրակոսյանը, ով պարգեւատրվել է 100 հազար դրամով: Երրորդ տեղը զբաղեցրել է Գեղարքունիքի մարզի Ծովասար համայնքի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտուհի Մանե Ալեքսանյանը, ով պարգեւատրվել է 50000 դրամով:

«Գեղամա աշխարհ»

ԴԴՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ՆՈՐ ԳՈՒՅՔՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Դդմաշեն գյուղի մանկապարտեզը համալրվել է նոր գույքով:

Սեւան համայնքի ավագանու 2024 թվականի տարեվերջյան նիստում ընդունվել է համապատասխան որոշում՝ «Սեւան համայնքի Դդմաշեն բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում նոր խումբ ավելացնելու վերաբերյալ:

Նոր խմբի լիարժեք գործունեության համար չի ուշացել նաեւ անհրաժեշտ աջակցությունը:

«Ֆոքս օն չիլդրեն նաու» բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ եւ բարեգործական ծրագրերի շրջանակներում, համագործակցելով Սեւանի համայնքապետարանի հետ, Դդմաշեն բնակավայրի մանկապարտեզի նոր խումբն իր լիարժեք գործունեության համար ապահովվել է անհրաժեշտ գույքով:

«Ֆոքս օն չիլդրեն նաու» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի եւ Դդմաշենի մանկապարտեզի միջեւ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում նախադպրոցական ուսումնական հաստատությունը համալրվել է երկհարկանի մահճակալներով, ներքնակներով, մանկական աթոռակներով եւ ճաշասեղաններով, հագուստի պահարաններով, խաղային կենտրոններով, հանդերձարանի նստարաններով, դաստիարակի աշխատասեղանով եւ աթոռներով, գրատախտակով, ինչպես նաեւ դիդակտիկ նյութերով:

Արմինե Ղուկասյան

ԼՃԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է «ԱՆՄԱՀ ԼՈՌԵՑԻՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՑԵՐԵԿՈՒՅԹ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Լճաշեն գյուղի Ա. Տեր- Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում, «Գիրք նվիրելու օրվա» շրջանակներում, անցկացվեց «Անմահ լոռեցին» խորագիրը կրող ցերեկույթ:

Լճաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Աիդա Մուրադյանի տեղեկացմամբ՝ աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ սովորողները, արդեն տոնական դարձած ավանդույթով, տնօրինությանը եւ ուսուցիչներին գրքեր նվիրեցին:

Թումանյանական մթնոլորտ էր տիրում դպրոցում, հնչում էին երգեր Հ. Թումանյանի խոսքերով, հատվածներ ներկայացվեցին Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից :

Օրն ավարտվեց Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին նվիրված գրական- երաժշտական ցերեկույթով:

2-րդ դասարանցիները բեմականացրին Հ. Թումանյանի «Ձարի վերջը» եւ «Տերն ու ծառան» հեքիաթները, իսկ 4-րդ դասարանում անցկացվեցին Թումանյանին նվիրված գողտրիկ միջոցառումներ:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության տեղեկացմամբ՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան եւ «Գիրք նվիրելու օրվա» շրջանակներում միջոցառումներ են տեղի ունեցել նաեւ Գեղարքունիքի մարզի հանրակրթական, արվեստի ու երաժշտական դպրոցներում, գրադարաններում, նախակրթական հաստատություններում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 86 ԵՐԵԽԱ

2025 թվականի փետրվար ամսին Գեղարքունիքի մարզային ենթակայության ծննդօգնություն իրականացնող առողջապահական հիմնարկներում ծնվել է 86 երեխա, որից 41-ը՝ տղա, 45-ը՝ աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 86 երեխաներից 18-ը ծնվել են Գավառի բժշկական կենտրոնում, 37-ը՝ Մարտունու ծննդատանը, 21-ը՝ Սեւանի բժշկական կենտրոնում, 8-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոնում եւ 2-ը՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

Նույն աղբյուրի տվյալներով՝ 2024 թվականի փետրվարին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 92 երեխա՝ 57 տղա, 35 աղջիկ:

Խոսրով Խլղաթյան

4.qxd 04/03/2025 14:58 Page 7

ԱՍՔ ՍԻՐՈ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ. ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ԴՇԽՈՒՀԻ

Հայրապետ աղա Խաչատրյանի տունը գտնվում էր քաղաքի կենտրոնում՝ Գավառագետի ափին: Ուներ տուն տանող երկու ճանապարհ, մեկը՝ Գավառագետի ափով, մյուսը՝ եկեղեցու կողքով: Նրա տուն մտնելու համար նախ պետք է կամարակապ մուտքով ներս մտնեիր, որն ուներ ճարտարապետական յուրահատուկ կառուցվածք, այն հենց սկզբից էլ մեծ շուք ու գեղեցկություն էր տալիս աղայի շենքի ամբողջ համալիրին: Ներս մտնելով մուտքից՝ կնկատեիր, որ ամբողջ բակը չորս կողմից շրջապատված է շենքերով: Նախ ձախ մասում երկայնքով ձգվում էին

վեց սենյակները՝ իրենց պատշգամբներով, որն աղայի ձմեռային կացարանն էր: Դիմացը դարձյալ սենյակների մի ամբողջ շարք էր ձգվում: Այստեղ նա անցկացնում էր աշունը: Կամարակապ մուտքից աջ կար սենյակների մի խումբ եւս՝ իրար կողք-կողքի: Դրանք ծառայում էին որպես լվացքատուն, խոհանոց, իսկ մյուսները՝ աղախիններին եւ տան մյուս ծառայողների ու սպասավորների կացարաններն էին: Նշված սենյակները գտնվում էին միջանցքի ամբողջ երկարությամբ: Դրանց հաջորդում էր դիմացը կառուցված երկհարկանի հոյակապ շենքը, որը նայում էր Գավառագետին: Այն հետաքրքիր եւ գեղեցիկ կառուցվածք ուներ: Նախ՝ այն սկսվում էր միջանցքով: Միջանցքի երկու կողմերում դռները տանում էին առանձին սենյակներ, որոնցից յուրաքանչյուրի դուռը բացվում էր հաջորդ սենյակի մեջ: Միջանցքի դիմացի դուռը տանում էր մեծ դահլիճ: Դահլիճից ելք կար դեպի դրսիպատշգամբ, որը հենվում էր շենքի դիմացի ճակատային մասի պատից դուրս եկած սյուների վրա: Շենքը տաքացվում էր պատերի մեջ գտնվող վառարանների միջոցով: Յուրաքանչյուր սենյակ ուներ այդպիսի երկու վառարան աջ եւ ձախ կողմերում, որը նաեւ տաքացնում էր կողքի սենյակները: Այդ հոյակապ կառույցը, որի շինարարությունը ավարտվել էր 1883 թվականին, ուներ չորս մեծ սենյակներ եւ մի անընդարձակ դահլիճ: Շենքի միջին բարձրությունը կազմում էր մոտ չորս մետր: Շենքն ուներ նաեւ նկուղային հարկ, որտեղ Հայրապետ աղան պահում էր գնած բոլոր մթերքները: Նկուղները, որոնց թիվը հասնում էր վերեւի հարկի սենյակների թվին, շատ բարձր էին՝ երկուսուկես մետր: Այնտեղ պահվում էին նաեւ վաճառքի համար բերված տարբեր տեսակի ապրանքներ:

***

Հայրապետ աղան առեւտրական կապերի մեջ էր Պետերբուրգի, Մադրասի, Գերմանիայի որոշ քաղաքների հետ: Այդ երկրներից էին գալիս վաճառքի համար նախատեսված անհրաժեշտ ապրանքները դեպի Թիֆլիս, այնտեսից էլ տեղափոխվում դեպի Կոլոտ աղայի շենքի պահեստներ: Նա մեծ համբավ ու հռչակ ունեցող վաճառական էր: Ուներ շոշափելի դրամագլուխ, որը պահ էր տալիս շվեյցարական բանկում: Նա փողի արժեքը հասկացող ու գնահատող մարդ էր, իր բացարձակ խելքի եւ հնարամտության շնորհիվ գիտեր ինչպես եւ ինչ ճանապարհով փող աշխատել: Հաճախակի կրկնում էր իր միտքը, թե փող աշխատելը մի բան է, ծախսելը՝ ուրիշ: Աղան նաեւ ծախսում էր, սակայն չէր շռայլում: Այդ էր պատճառը, որ նա այդչափ սեծական կառույցներ ուներ ու կարողանում էր այդքան բարեգործություններ անել:

***

Հորը աղոտ էր հիշում: Հայրը՝ Ստեփանը, 1853-56 թվականների Ղրիմի պատերազմին գնացել եւ չէր վերադարձել: Այդ ժամանակ նա ինը տարեկան էր: Իր եւ միակ քրոջ համար ապրուստի միջոցները քրտնաջան եւ հալալ աշխատանքով հայթայթում էր մայրը: Սակայն մայրն էր երկար չկարողացավ հաշտվել ամուսնու կորստի հետ: Նա էլ կյանքից հեռացավ վաղաժամ, երբ որդին 12 տարեկան էր, դուստրը՝ 10: Որբուկները մնացին անուժ ու անօգնական: Այնուամենայնիվ, նա իր մեջ ուժ գտավ...

Մանկուց լինելով խելացի, ազնիվ եւ արդարամիտ՝ բոլորը նրան վստահում էին: Սկզբում որոշեց զբաղվել ձվի առեւտրով: Եվ դա նրան հաջողվեց: Ծանոթներից ու հարեւաններից ապառիկ որոշ քանակությամբ հավի ձու էր վերցնում՝ վաճառելու համար: Ձուն հասցնում էր Երեւան կարճ ճանապարհով՝ լեռնային արահետներով: Ճանապարհի հարցում նրան օգնում էր հոր վաղեմի ընկերներից մեկը, որը ձուկ էր տանում Երեւան եւ Արարատյան դաշտի կողմերը, վաճառում եւ իր տան ապրուստը հոգում: Նա պատրաստակամություն հայտնեց՝ օգնել եւ զորավիգ կանգնել կռվի դաշտում զոհված իր ընկերոջ որդուն: Սկզբնական շրջանում քիչ օգուտ էր մնում: Նախ՝ ձուն քիչ էր վերցնում, ապա՝ ապառիկ տվողները համեմատած թանկ էին հաշվում: Այնպես որ, եկամուտը մեծ չէր: Կամաց-կամաց ձվի վաճառքով զբաղվելով՝ ստեղծեց շատ փոքրիկ մի դրամագլուխ: Այն նրան հնարավորություն տվեց՝ վերավաճառելու համար վերցված ձվի արժեքը վճարել կանխիկ: Դրա հետեւանքով նրա եկամուտը աճում էր, իսկ ճանապարհավարձ չէր տալիս: Իր վաստակած գումարով կարողանում էր ապրել քրոջ հետ միասին, նույնիսկ փոքրիկ գումարներ էր կարողանում տնտեսել, ետ գցել՝ իր հետագա ֆինանսական եւ առեւտրական մտահղացումների իրագործման համար: Երբ արդեն որոշ խնայողություններ ուներ, որոշեց շատ նեղություն չտալ իր բարերարին՝ հոր ընկերոջը: Սկզբում գնեց երկու ավանակ՝ իր ապրանքը Երեւան հասցնելու եւ վաճառելու համար: Առեւտրից, հատկապես Երեւան գնալ գալուց շատ էր հոգնում: Ճանապարհն անցնում էր Գեղամա լեռների միջով, որը կտրատվում էր բազմաթիվ փոսերով, դարավանդներով: Այնուամենայնիվ, թեպետ ճանապարհը ձորերով էր անցնում, քարքարոտ ու փոշոտ էր, սակայն այն գրեթե կիսով չափ կրճատում էր Երեւան տանող բանուկ ճանապարհը: Նա ոտքով էր գնում, գրաստները բարձած էին լինում ապրանքով:

Համենայնդեպս, գոհ էր լինում՝ չնայած հոգնածությանը: Եկամուտը քանի գնում, մեծանում էր: Փող աշխատելու նոր միջոցներ եւ ճանապարհներ էր որոնում եւ գտնում: Այս անգամ էլ որոշեց ավանակների քանակն ավելացնել տասով, իսկ վաճառվող ապրանքի տեսականին էլ՝ փոխել:

Հոր ընկերոջ հետ արդեն մայրաքաղաք ու Արարտյան դաշտի կողմերն էր տանում Սեւանա Իշխան ձուկը: Նոր առեւտրական ձեռնարկներով նա կրկնակի եկամուտ էր ստանում: Նախ՝ ձուկը մայրաքաղքում եւ այլուր վաճառում էր իրեն ձեռնտու գնով, ապա՝ այդ նույն գումարով գնում էր տնտեսության համար առաջին անհրաժեշտ ապրանքները՝ վերավաճառելու համար: Սկզբում ձեռք բերեց մի փոքրիկ կրպակ եւ գնված ապրանքները վերավաճառում էր այնտեղ: Կարճ ժամանակում կրպակը մեծացրեց: Հետագայում կողքերի կրպակները գնեց եւ առեւտուրը ընդլայնեց: Օրեցօր առեւտրից ստացած եկամուտը աճում էր: Նոր կապեր հաստատեց առեւտրական լայն շրջանների հետ:

Քանի գնում՝ խորանում էր առեւտրի մեջ: Կառուցել տվեց առեւտրական շենքերի մի ամբողջ համալիր: Այն ձգվում էր եկեղեցու աջ թեւի ամբողջ երկայնքով մինչեւ շուկա:

Արդեն երկար ժամանակ էր, ինչ թողել էր իշակչությունը: Մեկ դյուժին հասնող ավանակների խումբը նվիրեց իր բարերարի որդուն, որը հորից հետո նրա գործը շարունակում էր: Սկզբնական շրջանում ծառայության մտավ մեծահարուստ Աֆրիկյանների մոտ, աշխատում էր որպես գործավար, հետո՝ կառավարիչ: Այդ ժամանակ էլ զգաց, որ անհրաժեշտ է սովորել, ավելացնել իր գիտելիքների բաց թողածը եւ սկսեց զբաղվել ինքնակրթությամբ: Տքնաջան աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում նրան հաջողվեց տիրապետել վրացերենին, ռուսերենին, իսկ հետագայում նաեւ գերմաներենին:

Աֆրիկյանների տանն էր, որ տեսավ եւ ծանոթացավ, իսկ ինչու՞ չէ, նաեւ սիրահարվեց իր կյանքի ապագա ընկերուհուն՝ Դշխուհուն, որն իր տիրոջ՝ Մելքոն աղայի դուստրն էր: Չար լեզուներն ասում էին, որ Դշխուհուն տվել են աղային, որովհետեւ Դշխուհին հասակն առած, տանը մնացած տգեղ աղջիկ էր եւ Կոլոտ աղայից մեծ էր: Սակայն իրականում Դշխուհին իր ամուսնուց փոքր էր 12 տարով: Այդ է վկայում նաեւ նրանց գերեզմանաքարի վրա գրված թվականները: Դշխուհին իրականում շատ գեղեցիկ ու խելացի կին է եղել: Աղան Դշխուհուն պարտական էր բոլոր առումներով: Դշխուհին ոգեշնչում էր նրան որոշ ձեռնարկներում: Նա աղայի համար ոչ միայն իր կյանքի ընկերն էր, այլ նաեւ լծակից, կողակից, միակ ու անփոխարինելի, անկեղծ ու անշահախնդիր խորհրդատուն: Դշխուհին գլուխ էր հանում նրա առեւտրական բոլոր գործարքներից: Նա է եղել Կոլոտ աղայի օգնականը նրա առաջին մեծածավալառեւտրական գործերում:

/շարունակելի/

Սամվել Աղլամազյան

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՎԻՐՅԱԼ ԶԻՆՎՈՐԸ



Կյանքի 67-րդ տարում, ծանր ու տեւական հիվանդությունից հետո իր մահկանացուն կնքեց Հայրենիքի պաշտպանությանը կամավորագրված մարտիկ Համբարձում Աղաբեկի Ասլանյանը:

Համբարձում Ասլանյանը ծնվել էր 1962 թվականին, ՀԽՍՀ Մարտունի քաղաքում, բանվորի ընտանիքում: Սովորել եւ ավարտել է Մարտունու թիվ3 միջնակարգ դպրոցը, ծառայել խորհրդային բանակում, աշխատել Հայփոստի Մարտունու բաժանմունքում եւ «Անի» գործարանում:

1990-1994 թվականներին Համբարձում Ասլանյանը մասնակցել է Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանական մարտերին ու Արցախյան ազատամարտին, աչքի ընկել խիզախությամբ ու նվիրվածությամբ:

Ամեն անգամ, երբ վտանգվում էին հայրենի երկրի սահմանները, Համբարձումը, առանց երկմտանքի, տանը թողնելով կնոջն ու երեք երեխաներին, հայտնվում էր ամենաթեժ կետերում՝ իր ներկայությամբ քաջալերելով մարտական ընկերներին ու նեցուկ կանգնելով նրանց:

Հայրենիքի անվեհեր զինվորը դժվարին պահերին ոչ միայն տոկուն կամք էր դրսեւորում, այլ նաեւ հումորի անսահման զգացում՝ բարձրացնելով վիճակների տրամադրությունը:

Հպարտանում էր Հայոց բանակի կռած հաղթակներով, որտեղ ուներ իր համեստ բաժինը, հպարտանում էր ազատագրված Արցախով ու հայրենի երկրի ամեն մի ձեռքբերումով:

Համբարձումը բարի համբավ ուներ նաեւ այն կոլեկտիվներում, որտեղ աշխատել էր տարբեր տարիներին: Բոլորը նրան ճանաչել են որպես ազնիվ, բարի, աշխատասեր ու մարդասեր մարդու, նվիրյալ ընկերոջ:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Համբարձում Ասլանյանը պարգեւատրվել է «ՀՀ մարտական ծառայություն» մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ» մեդալներով, ԵԿՄ հուշամեդալներով ու պատվոգրերով:

Համբարձում Ասլանյանը բազմաշունչ ընտանիքի օրինակելի հայր ու պապ էր:

Հայրենիքի նվիրյալ զինվորի, լավագույն ընկերոջ, սիրող ամուսնու եւ ծնողի, ազնվ ու բարի մարդու անունը միշտ վառ կմնա մեր սրտերում:

Մի խումբ ընկերներ
«Գեղամա աշխարհ»
թերթի խմբագրություն

4.qxd 04/03/2025 14:58 Page 8

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՈՅԻ ՎՐԵԺԸ
/Քնարէպիկական պոեմ/

/սկիզբը՝ էջ 1-ում/

...Ու եղավ Ազատ, Անկախ Հայաստան,
Հայոց Եռագույն ու Ձիգանշան,
Հեղված արյան տեղ վարդեր աճեցին,
Մոխիրներից էլ՝ Հանրապետություն:
Արդեն զինվորն էր Հայոց պետության,
Նրա պահապան այրը իմաստուն:
Թալինն էր շինում, Մարաթուկն հիշում,
Ձքնաղ դուստրերին սիրով գուրգուրում...
Ու երբ թվաց, թե այգն Ազատության
Հեռու եթերից իր դուռն էր եկել,
Աշխարհում կրկին փոթորիկ եղավ,
Քարվան-Կորուսի սոսկալի գիշեր:
Հայոց արեւը խավարեց կրկին,
Երբ հանկարծակի ձեռք ձեռքի տվին
Ռուսաց երկրի Կարմիր Սատանան
Եվ Քեմալը թուրք՝ հայոց թշնամին:
Հայաստանն ընկավ երկու հրեշի
Կրունկների տակ, լափող երախում,
Թողեցին նրան անտեր, մեկուսի,
Մուրճի ու սալի ճզմող արանքում:
Իրենք կռվեցին մի վերջին ճիգով
Անգութ, ջարդարար բանակների դեմ,
Հողը շնչում էր մութ ու նենգ դավով,
Նեռի ձեռքերով դժոխքն էր կերտվում:
Երբ պատառոտող թաթերն իր դրեց
Կարմիր Սատանան Հայոց հին հողին,
Հղացավ մի նոր արնահեղություն,
Որ նողկալի էր ամեն ոճիրից:
Հորինեց պայքար դասակարգային՝
Սեւ ու սպիտակ, դաշնակ-բոլշեւիկ,
Եղբորը հանեց եղբայրների դեմ,
Իրար ուրացան հարազատ մարդիկ:
Հայրենի հողի համար մաքառած
Այրերն ազգասեր բանտեր դրվեցին,
Ու բոլշեւիկյան հրամանով պիղծ
Թուրք դահճի ձեռքով կացնահարվեցին:
Կարոն զենք առավ դահիճների դեմ,
Հալածեց նրանց հողից հայրենի:
Բայց նորից Կարմիր դեւերը եկան՝
Դարձնելով իրեն խեղճ վտարանդի:
Նա փորձեց ապրել մի այլ աշխարհում՝
Չարքերից հեռու, ուր չի հալածվի,
Ուր ռանչպարից հացը չեն խլում
Հրացանի տակ, մոլուցքով բռնի,
Ուր եկեղեցու խորան չեն քանդում,
Հորը եւ որդուն սարքում թշնամի:
Սակայն կարոտը քաշում էր ուժգին,
Հեռվից կանչում էր տունը հայրենի:
Խորթ էր ամեն հող սրտին դիցական,
Բահ-մաճի սովոր ամուր ձեռքերին:
Կանչում էր իրեն մարթան գեղանի,
Դուստրերը չքնաղ՝ երեք սիրասուն:
Ու երբ ձեռք գցեց թուղթը իր ներման,
Ճամփան նա բռնեց Ահագչի գյուղի:

7

Հոգու ողջ սիրով ցանում էր, հնձում,
Քրտինքը խառնում հայրենի հողին,
Ամեն ծիլ ու թուփ սրտանց գուրգուրում՝
Ձենքի տեղ բռնած մաճն ու գերանդին:
Հողե մի անշուք, փոքրիկ քողտիկում
Սերը դրախտի պարտեզի նման
Վառ ծաղիկների կոկոն էր բացում,
Երբ ժպտում էին դուստրերն ու Մարթան:
Կարոն հողի մեջ շիվեր էր դնում՝
Տանձի, խնձորի, ծիրանի, դեղձի,
Իր Կաթավ ձիու բաշի հետ խաղում,
Գառները տանում կանաչ արոտի...
Երբ իր բարբառով էպոսն էր պատմում
Շողքի պես արդար իր զավակներին,
Սասուն աշխարհի հմայքն էր տիրում
Հոգնած ջղերին, փոթորկուն մտքին:
Ու պողպատ հոգին մի ակնթարթում
Հալվում էր, դառնում մանուկ ժրաջան,
Սասնա Ծուռ Դավիթ՝ շաղգամի արտում՝
Դիմադարձ կանգնած Մսրա բանակին:
Մարմնով տան մեջ էր, փայտե հին թախտին,
Բայց մտքով արդեն Սուրբ Կարապետում,
Բաթմանա գետի ձյունոտ ափերին,
Կամ իր հայրական Գելիգուզանում:
Լեզուն խոսում էր, անուշ բարբառում,
Բայց մորմոքում էր ամեն մի բառից
Փորձություններում, անթիվ դավերում
Դեռ պինդ ու հզոր սիրտը կարոտած:
Հիշում էր շատ վառ, թե ո՞ր ձորակում,
Ո՞ր ժայռի կողքին, ո՞ր լեռան փեշին
Ինչ ծաղկունք էին հողից դուրս թափվում՝
Շռայլ, պերճորեն, տաքուկ գարունքին:
Իր հրացանն էր գծվում աչքերին
Ու գնդակը այն՝ միակ, առաջին,
Որ ցած տապալեց քրդին արնախում
Ավազակային հարձակման պահին...
Հուշում էր միտքը, որ չի լինելու
Երբեք ու երբեք Թալինը Սասուն,
Որքան էլ անուշ հողն այս հայանա,
Ահագչին դառնա նոր Գելիգուզան:
Առյուծ Մհեր էր զգում նա իրեն,
Երբ որ հեծնում էր հրոտ Կաթավին,
Արյունը եռք էր գալիս իր մարմնում,
Երբ հանդիպում էր հին ընկերներին՝
Սասնո ընձառյուծ ֆիդայիներին:
Իր կողքին էին եզնարած Չոլոն,
Տեր Քաջի Ադամն ահեղամռունչ,
Վիշապանման Փեթարա Իսրոն
Ու Մոսե Իմոն ամենաճանաչ...
Քնի մեջ լիներ, խորունկ երազում,
Հարսանիքների աշխույժ պարերում,
Հոգին մղվում էր դեպ իր հին ոստան,
Անառիկ լեռներ ու Մշո դուրան:
-Տեր Քաջի Ադամ,-ցավով էր հարցնում,-
Մեկով հարյուրի դեմ ենք մարտնչել,
Փախուստի մատնել զազիր թշնամուն,
Գետերի չափ էլ հորդ արյուն հեղել:
Այդ ինչպե՞ս եղավ, ի՞նչ թաքուն դավով,
Ի՞նչ անպատմելի ապիկարությամբ,
Ո՞ր սատանայի հնարանքներով,
Ո՞ր չարագործի արյունոտ ձեռամբ՝
Բովանդակ մի ազգ սրի քաշեցին,
Ցցերի վրա արին տանջահար,
Ողջակիզեցին կամ քառատեցին,
Ու Հող-հայրենին դարձավ կորուսյալ:
Թե սա ապրել է, հազարապատիկ
Երջանիկ եղան քաջերն այն բազում,
Որ մարտերի մեջ դարձան լոկ դիակ
Ու այս դժոխքը աչքով չտեսան...
Լենին կոչեցյալ դահիճ հրեշի
Պատկերն ամենուր արել են դրոշ,
Մի սրբապատկեր, փրկարար ոգի,
Ձնդանել են մեզ օրերում այս գորշ:
-Մենք կռվում էինք, քաջարի ընկեր,-
Ադամն էր հոգու հառաչով ասում,-
Բայց արյունը մեր վաճառում էին
Ահռելի գնով, անամոթաբար՝
Թողնելով մեզ լոկ հառաչ ու կորուստ,
Ու անդառնալի կսկիծ ու կարոտ,
Մեկ էլ՝ բռաչափ մի լեռ քարքարոտ՝
Գերեզմանի տեղ, արցունքի հովիտ:
Հարամիները թրքաբոլշեւիկ
Մեզ հոշոտելու դավեր են նյութում՝
Հետքը ֆիդայու ջնջելու արագ
Ճիրանների մեջ սատանայական:
Իրենց հայ կոչող չեկիստներն արդեն
Գալիս-գնում են մեր թշվառ շեներ՝
Ձնդան տանելու անպարտ Չոլոյին,
Վագր Իսրոյին, որ ազգ է փրկել:
Ժամ ու պատարագ, շարական-աղոթք
Ամեն-ամեն ինչ ձեռքում է Նեռի,
Ու ինչ ելք էլ որ հիմա որոնենք,
Օդը մեր միտքը արագ կմատնի:

8

Մորուք Կարոյի հոգին փուլ եկավ,
Երբ կրկին հիշեց խոսքերն Ադամի,
Երբ վերքերը հին օրը ցերեկով
Բացվեցին մեկեն ցավով սոսկալի:
Հիշեց, թե ինչպես Չոլոյին տարան՝
Ձեռքերը կապած, հրացանի տակ,
Ծանակում էին՝ թուրքից էլ դաժան,
Անծնող, անազգ որբերն հացկատակ:
Իսկ չեկիստները որբերն էին այն,
Որոնց մեկ ոսկով հավաքում էին
Մուրադն ու Չոլոն, Իսրոն ու Ախոն
Թշնամիների որջերից գազան
Եվ բերում, հանձնում որբատներին:
Հիշեց, թե ինչպես Ադամն ու Իսրոն
Չեկայի մի ողջ ջոկի դեմ ելան՝
Քաջին շատ վայել մահով մեռնելու,
Բայց անհիշատակ շիրիմներ եղան:
Մարթային հիշեց, իր զավակներին,
Որոնց բռնությամբ աքսորել էին
Հեռու, անծանոթ, օտար աշխարհներ՝
Տաժանք կրելու, լուռ տառապելու:
Իր փախուստն հիշեց չեկայի ճանկից,
Ու աստանդական կյանքը ահավոր,
Երբ լեռների մեջ, ամենքից լքված,
Ապրում էր անհաց, անտուն, անընկեր:
Մարդկանց աչքերից ցերեկը պահվում,
Մթով էր միայն ելնում պտույտի,
Ծանոթ վայրերով շատ զգույշ շրջում՝
Հետը ման տալով նաեւ գերանդի:
Շինական մարդկանց արտերն էր հնձում,
Որ թողել էին ցերեկն անավարտ,
Լույսի շողքի հետ արդեն կորչում էր՝
Ինչպես գիշերը՝ ցայգալույսին մոտ:
Էպոսի Փոքր Մհերի նման
Գնում էր ցասկոտ, զայրացած, մոլոր,
Հողը ոտքի տակ էլ չէր դիմանում,
Կաթավի պայտն էլ մաշվել էր, պոկվել:
Իրեն բախտակից Ձնգլիկ Պետոն՝
Սեղանակիցը այս ակնթարթի,
Այն օրհասական, դժվար պահերին
Դարձավ ընկերը իր թափառ կյանքի:
Հայրենի հողից միասին փախան՝
Ճեղքելով ջուրը վարար Արաքսի,
Քրդական կռվող զորքին միացան՝
Ընդդեմ թուրքական բռնի կարգերի:
Ապա կտրեցին սահմանն Իրանի,
Եկան, Թավրիզում բնավորվեցին՝
Դառնալով Ոգին Հայ գաղափարի,
Արդար վրեժի, ազգի հաղթության:

9

Ու դաշնակ եղոն, բաժակը ձեռքին,
Մորուք Կարոյի կենացն է խմում,
Սրտանց ու անկեղծ մեծարում նրան,
Կռվի, փախուստի օրերից պատմում:
Ինգլիզի սպան բառ առ բառ լսում,
Հայացքն է որսում հզոր ֆիդայու,
Ում ջինջ աչքերից ցասում է թափվում
Ընդդեմ չարիքի, այդքան ահարկու:
Իսկ անգլիացու կենացի վրա,
Որպեսզի Կարոն ոխից հագենա,
Իրանցի սպան ժպիտով ասաց,
Թե նա է հայտնի այրն աչքի ընկած,
Ով անապատում Աղջակումայի
Բաքվի քսանվեց կոմիսարներին
Իր ձեռամբ անարգ մահու է տվել:
Իսկ զարկն առաջին բաժին է ընկել
Նրանց առաջնորդ հայ Շահումյանին:
-Դու պիտի սեղմես ձեռքն այն պատվական,
Որ քո վրեժը վաղուց է առել,-
Ցցուն ժպիտով դիմեց իրանցին
Մորուք Կարոյին՝ եղած ապշահար:
Ասաց, ու նրան հենց այնպես թվաց,
Թե հիմա Կարոն տեղից վեր կելնի,
Կսեղմի ամուր ձեռքը ինգլիզի՝
Որպես համախոհ, որպես դաշնակից:
Բայց Կարոն ամուր հենվեց աթոռին,
Որ իր լսածից ցած չգլորվի,
Որ իր ուղեղից շուտ ցնդի գինին,
Վճիռն իր դնի թաթին կշեռքի:
«Այս բիրտ բորենին ոչ թե փրկարար,
Այլ մեծ դահիճն է իմ տանջված ազգի:
Ահա ովքեր են պատերազմ բերել
Ու վիհը բացել Հայոց Եղեռնի...
Ահա ովքեր են անխտիր զինել
Բազուկն ու ոգին արնախում թուրքի,
Արյունը հայի շատ թանկ վաճառել
Ու շահել գաղութ, հանքեր ու ոսկի:
Իրար դեմ ոխով ազգեր կռվացրել,
Իսկ վերջում կանչել վեհաժողովի,
Սահման ու ճամփա այնպես բաժանել,
Որ պատեհ պահին նոր կռիվ պայթի»,-
Խորհում էր Կարոն իր պղտոր մտքում,
Արյուն էր կաթում բաբախող սրտից,
Կատաղի հոսքով զարկում քունքերին,
Ամրակուռ հոգին հանում իր հունից:
...Նայեց ինգլիզի ժպտուն հայացքին,
Աչքերի փայլը սարսուռով որսաց.
Իր դեմ կանգնած էր ազգի թշնամին՝
Հայրենակործան, նենգ ու քողարկված:
-Այդ չեմ իմացել,-բարբառեց Կարոն՝
Ցավն ու ցասումը հազիվ զսպելով,-
Դե հիմա պատմի՛ր, ուշադիր լսեմ,
Մանրամասնորեն, դրվագ առ դրվագ:
Ինգլիզի սպան ոգեւորությամբ
Դեմքին տարածեց ժպիտը շողոմ
Ու խոսեց երկար, շիտակ, անշտապ՝
Գործի դնելով լեզուն դիվային:
-Աշխարհամարտ էր՝ անողոք, դաժան,
Ու կործանում էր, մահ համատարած,
Օրն հարյուր հազար դի էր հավաքվում
Կյանքեր խժռող ռազմադաշտերից:
Բանակներն իրար հոշոտում էին
Մոլեռանդ, անհագ վրիժառությամբ,
Իսկ մագնատները զենք էին ծախում,
Ու փողեր դիզում սառնասրտությամբ:
Տարիներ հոսող գետերում արյան
Նրանք մարդկային խիղճն էին խեղդում
Ու ճիչը նաեւ՝ որպես մոռացում
Իրենց մեղսագործ, նենգ հանցանքներին:
Պատերազմների միջով ես անցել,
Զգացել ահը հրի ու սրի,
Ինչից լավ գիտես, շուտ ես ճանաչել
Ճիրանները սուր թաթը եղեռնի:
Ձեր քաջությունը լոկ մի գեղեցիկ,
Մի իրապատում հեքիաթ էր հրաշք,
Որ երկար դարեր կպատմեն մարդիկ,
Նրանց շուրթերին կդառնան աղոթք:
Այսքանը միայն... մինչդեռ հողը ձեր,
Որ թաթախված է ձեր ազգի արյամբ,
Ձարհուրանքի խոր անդունդն է ընկել
Սատանաների անողոք ձեռամբ:
Կռիվը ձերն էր, վայելքն՝ հրեշին,
Որ առուծախի բորսա էր բացել
Իրար հոշոտող զորքի տիրույթում՝
Փարիզից Բեռլին, այլ արնոտ վայրեր:
Մենք Բաքվում էինք տասնեւութ թվին,
Երբ ռուս-թուրքական ճակատն էր փլվել,
Երբ ռուսաց հզոր զորքը հաղթական
Ձենքը ցած դրել ու տուն էր դարձել,
Երբ դուք մնացիք լքված ու մենակ
Թուրքական հսկա բանակի առաջ,
Երբ կենաց-մահու կռիվ տվեցիք
Ու ցաքուցրիվ, հարկադիր նահանջ:
Վրաց զորքերը կռիվ չտվին,
Իսկ թաթարները ելան գրկաբաց՝
Դիմավորելու արնակիցներին՝
Պանթուրանիզմի դրոշը պարզած:
Անտանտն այդ պահին ցանկություն չուներ՝
Թուրքերի ճամփան զենքով փակելու:
Մարտնչողն էլի հայկական զորքն էր,
Որ կրկին ելավ մարտիրոսվելու:
Բաքվի կոմունան՝ անզոր ու տկար,
Կարմիր բանակի գալուն էր նայում,
Բայց Լենին ցարից եկավ հեռագիր.
«Կռվեք եղածով, ձեզ շատ ենք սիրում...»:
Կռիվ էր ահեղ Բաքվի մոտերքում՝
Թուրքի ու հայի անզիջում կռիվ:
Ձորքը հայկական խիզախ մաքառում,
Ձոհեր էր տալիս թանկ ու անհաշիվ:
Մենք դիտում էինք, հաշվարկներ անում՝
Մեր շահ-օգուտից միայն ելնելով,
Որ թուրքը ռուսին Կովկասից քշեր
Ու մեզ ձեռք պարզեր նոր դաշնակցության:

/շարունակելի/

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 28. 02. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: